

ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 բուրջի կէս տարւան 6 բուրջ... Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. ТИФЛИСЬ, РЕДАКЦІЯ «МШАКЪ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առիթներէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիզովով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողաւորին 10 կոպէկ. Տ է Լ է Ք օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ի Բ Գ Ի Ա Ր Ե Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱԼՆԵՂԱՅԻՆԻՆ

Օգոստոսիան Հիւրեր. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՆ. Կրիզիս. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Արտաքին լուրեր. — ԱՌՆԻ ԼՈՒՐԵՐ. Թուրքիկ զրոյցներ. — ՀԵՌԱՊԵՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ցուցանանքներ:

ՕՂՈՍՏԱՓՍՈՒ ՀԻՒՐԵՐ

Հեռագրից Հարգելիք, որ Թագաւորը Կայսրը և Թագուհին Կայսրուհին զանգում են արդէն Ֆրանսիայում: Ռուսաց Կայսերական Չոյզի զարտեան սպասում էր Ֆրանսիան արտատրոփ կերպով տեսնելով այդ այցելութեան մէջ մի նոր գրաւական այն քաղաքական կապի ամրութեան համար, որ յայտնի է ուսուֆրանսիական դաշնակցութեան անունով: Այդ կապը տուէն է արդէն զործանական հետեւանքներ, ներկայացնելով մի մեծ հակադրական ոյժ եւրոպական ուրիշ դաշնակցութիւնների դէմ: Եւրոպայի մէջ խաղաղութիւն պահպանվելուն, անկասկած, մեծագույն նպաստել է իր կողմից երկպետեան այդ գաշնակցութիւնը պահպանելով մի և նոյն ժամանակ դաշնակցի այդ երկիրների համար գործունէութեան որոշ ազատութիւն:

Կայսերական Չոյզի ներկայ այցելութիւնը տեղի ունի մի այնպիսի ժամանակ, երբ արտաքին քաղաքականութեան մէջ տիրում է հանդարտութիւն, բայց լուծված չեն համարվում շատ խնդիրներ, որոնց վերաբերութեամբ կարող են ապագայում ծագել թիւրքիստանի թիւրքերը և քաղաքական ընդհարումներ: Ո՛չ Հեռագրը և ոչ Մօտակայ Արևելքները դեռ չեն ստացել այնպիսի հաստատուն և կայուն քաղաքական վիճակ, որ պետութիւնները թողնէին նրանց առանց հսկողութեան: Պետութիւնների մէջ գոյութիւն ունեցող առևտրական դաշնագիրները վերջացրել են և վերջացնում են իրանց պայմանագրով, իսկ նորերը սահմանելու համար իւրաքանչիւր պետութիւն ցանկանում է կարելին չափ ա-

ւելի արտոնութիւններ պահել իր ձեռքում: Եթէ բաւարար չիջում տեղի չունենան, պետութիւնների մէջ կարող են ծագել բարդութիւններ: Այլ ևս չենք խօսում այն անպատեհի և յանկարծակի եղելութիւնների մասին, որոնք ծագում են քաղաքական Տորիզիսի վրա, ինչպէս չինական պատերազմը, հարաւ-արեւմտական պատերազմը և ուրիշներ:

Ռուս-Ֆրանսիական բարեկամութեան նոր արտայայտութիւնը ապացոյց է այն բանի, որ երկպետեան դաշնակցութիւնը իսկապէս ձեռնտու և շահաւէտ է եղել թէ Ռուսաստանի և թէ Ֆրանսիայի համար և որ նրա դերը ոչ միայն չէ սպառված, այլ ստացել է իր գոյութեան համար նոր ապացոյցներ քաղաքական կեանքի նոր հոսանքների մէջ:

Այն ժամանակ, երբ Կայսերական Չոյզը հիւր է Ֆրանսիայում, Թիֆլիս են ժամանել Օգոստոսիան Հիւրեր — կովկասեան նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայիւի, յունական թագուհի Օլգա Կոստանտինովնա իր Անդրէյ և Գրիստօֆօր որդիների հետ, Մեծ Իշխան Գեորգի Միխայիլի իր ամուսնուհետ, Մեծ Իշխանուհի Մարիա Գիորգիւնա իր դուստր Նինայի հետ և Մեծ Իշխանուհի Էլիսա Վլադիմիրովնա:

Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայիւի, որ բարեհաճաբար ընդունեց կովկասեան ցուցահանդէսի օգոստոսիան Չովանաւորի կոչումը, այցելում է Թիֆլիսը մի այնպիսի րօպէտում, երբ նրա ղեկավարութեան տակ տարիներ շարունակ կառավարված երկիրը հանդէս է բերել իր արդիւնաբերութիւնը և բացարձակ յայտնում է, որ նրա քաղաքական կայունութեան առաջընթացութեան շարունակը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Կ Ի Ի Զ Ի Ս (Բազուի կեանքից) Մի ժամանակ, երբ նախը բարձր գին ունէր, երբ ամենայնոք բանւորից սկսած մի-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՑՈՒՑԱՀԱՆԻՍՈՒ

Չուտ գեղարուեստը բառիս բուն նշանակութեամբ Կովկասեան ցուցահանդէսում գրեթէ գոյութիւն չունի: Այդտեղ նկարներ ցուցադրող արուեստագէտների իսկական կովկասցիութիւնը որոշելը դժուար է, որպէս զի բոլոր այն կարողանալիք մի որ եւ է երազկապութիւն ղուրս բերել տեղական գեղարուեստի մասին:

Յամենայն դէպս, քանի որ Կովկասում չը կայ զուտ գեղարուեստով պարագոյնների մի որոշ կօնսերնդեան, այլ կան միայն տարվայ մի մասը Կովկասում ապրող, իսկ միւս մասը այլ եւ այլ քաղաքներում թափառող արուեստագէտներ, ուստի այդպիսիներին էլ պէտք է կովկասցի համարել, որովհետեւ գրաւք զուցէ, վերջի վերջոյ յոգնելով իրանց ղեկավարութեանց, կանգ առնեն մեզ մօտ:

Ի հարկէ մեզ համար շատ ցանկալի էր օր առաջ տեսնել գեղարուեստագէտների մի որոշ կօնսերնդեան կազմված, որովհետեւ մեր միակողմանի կեանքում, մեր ստիպան յետամնացութեան մէջ հարկաւոր են մեզ օգեւորողներ, հարկաւոր են ժողովրդական բարք ու վարք նրանցնողներ ու ճաշակն ազնուացնողներ...

սաւորութեան — mis-en scene-կողմից անխնամ է կազմված:

Մենք գիտեմք չեղում ենք այդ կէտը, որովհետեւ այցելունքը միայն տեսողութեամբ պիտի ստանան իրանց ապագորութիւնը, իսկ այդ բանի համար անհրաժեշտ են համապատասխան լուսավորութիւն ու դաստիարակութիւն:

Բայց դառնանք բուն խնդրին: Այս բաժնում ցուցադրած պատկերների թիւը հասնում է 144-ի: Նախ քան զբան մասին խօսելը նկատենք, որ անհրաժեշտ է զանազանիլ էտիզները նկարներից: Լաւ էտիզը շատ նկարիչների կարող են նկարել, իսկ մի լաւ նկար — շատ քչերը, ուստի մենք էտիզների վրա կանգ առնելու չենք *):

Չանկ օվակի ցուցադրել է ընդամենը 13 պատկերներ (Արարտ, Իրիտաւ, Բորժօմկա գետի կիրճը եւ այլն), — որոնցից կարելի է եզրակացնել, թէ հեղինակը միայն իրան յատուկ պրիզմայով է տեսնում Կովկասի բնութիւնը: Իսկապէս Կովկասի բնութիւնն այն չէ, ինչ որ ներկայացրած է նրա նկարներում:

Մեր երեքասորը նկարիչ Սուրէն Կանցը ցուցադրել է նոյնպէս 13 պատկերներ, որոնցից աչքի են ընկնում № 14-ը, որ ներկայացնում է եկեղեցում ապաստանած հայերի կոտորածը եւ գիտողի յիշողութեան մէջ զարթեցնում է Թիւրքահայաստանի ժողով անցեալի արեւնտ էջերը. № 22-ը, որ էջմիածնի

*) Նկարիչների անունները լիւրիւս հետեւել ենք ապագայում ցուցակի կարգին:

չեւ ամենակարող հանքային հսկանքը, մի տեսակ տեսողութեամբ, վերջին կօպէկներն էին գործի մէջ դնում ու փող զիջելու անյադ տեսնով երազների անուշութեան մէջ մրափում, այդ երջանիկ ժամանակներում մեր համայնաւարաւ կառավարիչները, ամաչելով նախը բարձր գնից, թէ եւ դժկամութեամբ, բայց էլի մի քիչ ուշադրութիւն էին դարձնում խեղճ ու կրակ բանւորների, բազմաչարչար ծառայողների վրա:

Իսկ այժմ... — Գ. կառավարիչ, 20 բուրջի ուժովով ապրել անկարելի է. ես անագին ընտանիք ունեմ, մեղք եմ, խեղճ...

— Այդ դեռ շատ շատ է... Կրիզիս է: — Այս օտարաբնի շոք ու աօթին, այս հոնած չորս պատերի մէջ 5 հոգով ապրելն անհասար է:

— Ով չէ ցանկանում, կարող է գնալ. կրիզիս է... — Այս փոքրիկ «կազարմի» մէջ տեղ չը կայ, որ 21-ը բանւորին տեղաւորեմ, խնդրում եմ կարգադրեցէք, պ. կառավարիչ, — յայտնում է գործակատարը:

— Թեմք, չասացի որ տեղաւորես... կրիզիս է... — Գ. կառավարիչ, ձեզանում գործակատարի ազատ տեղ կայ, խնդրում եմ ինձ ընդունէք:

— Առանց յանձնարարականի անկարելի է. կրիզիս է... — Էյ, էյ դու, քեզ չեմ տան, որ այս բանը այսպէս անես, — կասաղած գոռում է կառավարիչը:

— Գ. կառավարիչ, ես սովոր չեմ այդպիսի կոպիտ վերաւորանքներ կրել: — Սովոր չես... չորերդ հաւաքէր. կրիզիս է... Անս մի փոքրիկ պատկեր մեր առօրեայ կեանքից...

Հեռագրերի է իմանալ, արդեօք փողի կրիզիսն աւելի գործ է, թէ մեր ինտելիգենտ կառավարիչների խճի կրիզիսը...

Մ. Միսաքեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Նոր-Բայազէտ, օգոստոսի 15-ին Այս տարվայ Մշակի 166 եւ 172 համարներում ապրիլի 25-ին այսպիսիք գրված լուրեր:

վանքի առջ կատարվող թափօրն է պատկերացնում. եւ № 24-ը, որ ներկայացնում է օգոստի 25-ին Մարտի դեպի մօտ նըստած:

Գաղով նրա էտիզներին, պէտք է նկատել, որ նրանք բոլորն էլ աջողված են եւ լաւ քաղաքացիներ են թողնում — մանաւանդ Սեւանայ ընի արք. եւ Անիի աւերակ եկեղեցին: Սակայն դրանց մէջ նկատվում են երկու ծայրայեղ յատկութիւններ՝ այն ամենը, ինչ վերաբերում է անշունչ բնութեանը, աջող դրոշմ է ստանում պ. Սուրէնեանցի վրձինից, իսկ ընդհակառակը — շնչաւոր էակները — (օր. Ս. Գայիանէի եւ Ս. Հովիթիսի ղէմքերը եւ այլն) — մի տարբերակ ձեւ ու արտայայտութիւն են կրում:

Պօգօրել օվակի 9 պատկերներն էլ աշակերտական աջող աշխատութեան ապագորութիւն են թողնում եւ առանձին գրեթէ ոչինչ չեն ներկայացնում:

Տրիֆօն օվի բոլոր 10 պատկերներից էլ զուտ առօրեայ կեանքն ու հոտ է փչում, զուտ առօրեայ ոգի է շնչում: Դրանց մէջ չափազանց ուշադրաւ ենք «Ջրորի մօտ», «Փայտ կարողների հանգիստը» եւ մանաւանդ «Ուսուսազանցներ» սրտաշարժ պատկերը: Երեւում է, որ պ. Տրիֆօնով ունի բնատուր շնորհք եւ ապագայ խոստացող առաջանք:

Շուրջի ցուցահանում վեց պատկերներն էլ աւելի էտիզներ են նմանում, քան թէ բուն նկարներ: Նրանց մէջ նկատվում է գործի տեխնիկա, բայց գծագրելու շնորհք բացակայութիւն, որ մեծ պակասութիւն է ամեն մի նկարչի համար:

մեր երկու աւագ քանաններին վերաբերալ: Որովհետեւ այդ լուրերը զանազան գրպարութիւնների ու բաժնատնայնների առիթ են տուել ժողովրդի մէջ դէպի ինձ, իրեւ «Մշակի» թղթակցի, — ուստի այդ պատճառով խոնարհաբար խնդրում եմ յայտարարել, որ այդ լուրերի գրողը ես չեմ:

Գ. Միսանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօրվայ տօնի պատճառով «Մշակի» հետեւեալ համարը լոյս կը տեսնէ երեքշաբթի օր, տեղաւորների 11-ին:

Երէկ, սեպտեմբերի 7-ին, ժամի 4-ին, Բորժօմից Թիֆլիս ժամանեցին Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայիւի, յունական թագուհի Օլգա Կոստանտինովնա, Մեծ Իշխան Գեորգի Միխայիլի, Մեծ Իշխանուհի Մարիա Գիորգիւնա եւ Էլիսա Վլադիմիրովնա: Գաղաքը առաւօտեանից զարդարված էր ուսաց եւ յունական դրօշակներով: Օգոստոսիան Հիւրերին Թիֆլիսի կայսրանում ղեկավարեց կառավարչապետ Իշխան Գոլցիցին. Թիֆլիսի քաղաքապետը աղ ու հաց մատուցեց:

Սեպտեմբերի 5-ին Թիֆլիսի ոստիկանութեան պաշտօնեաներին աջողից զանկ դրամաններին, որոնք չինում էին կեղծ հինգ բուրջիանոց ոսկիներ, Գրամաններին բնակարանում գտնված են երկու դեռ եւս անպատրաստ ոսկեայ կեղծ դրամներ եւ մի քանի գործիքներ նրանց պատրաստելու համար: Այդ առիթով ձերբակալված են մի քանի հոգի:

Բազուից հաղորդում են տեղական թերթերին, թէ յայտնի նախարարները Առաքել Մատուրեան ծախել է իր նախահանգրից մէկը Թիֆլիսի «Առեւտրական-նախարարութեան» ընկերութեան 250 հազար բուրջով վաճառուը կատարված է Թիֆլիսում:

Մայրաքաղաքի լրագրիչների խօսքով, ինչական վերջին անցքերի պատճառով եղած ընդմիջումից յետոյ Ռուսաստանի տեւաւորական յարաբերութիւնները հետո Արեւելքի հետ ներկայումս օկնել է նորից կենդանութիւն ստանալու Այդ յարաբերութիւնները գիւրայնե-

Տօիձէի «Եկեղեցական տօնախմբութիւն» պատկերն ամբողջ ցուցահանդէսում առաջին տեղն է բռնում իր մեծութեամբ: Նա ներկայացնում է վրաստանի մի հրաշալւոր եկեղեցու աօն օրվայ ուխտագնացութեան, ժողովրդական կեր ու խումի եւ համախմբումի տեսարանը եւ բաւարար ապագորութիւն է թողնում իր բնական անջողով:

Չօմբի պատկերներին — (Կաղաքի, Թիֆլիսի փողոցը, Գարաւան եւ այլն) — նայելիս մարդ կամայից յիշում է Չանկօվօնուս: Վրացի նկարիչ Գարաւանի աշխատութիւնները ուշադրաւ են թէ տեխնիկայի կողմից եւ թէ բովանդակութեամբ: Արեւելեան կեանքն է նրան գրաւողը, արեւելեան կեանքն է նրա պատկերների նիւթ կազմողը: «Մոլորանդ» թմրակար եւ նրան հետեւող անվախ մարանչողները, «Բուխարայի շտարուաններից մէկը եւ նրա շուրջը խմբված ու կամ առանձնակի նստած բուխարայիները, «Հանգիստ վայելող լեռնականները», «Տիպիկական խնամքները» — անա դրանք են նրա ցուցադրած պատկերները, որոնք շատ-շատերն յայտնի կը լինեն դեռ նրա սեփական ցուցահանդէսից: Ինչ էլ օր լինի, այդ պատկերներից պարզ երեւում է, որ Գարայիկ տաղանդի տէր նկարիչ է:

Բաշին շաղախ, որի անունը վաղուց արդէն յայտնի է հայ հասարակութեանը, որի տաղանդի որակը վաղուց արդէն ընտրված է, այս ցուցահանդէսում դրել է ընդամենը երեք պատկեր՝ «Սեւանայ լիճը», «Կատարը» եւ «Գիւրը»: Այդ երեք պատկերներն էլ իրանց մէջ պարունակում են մի առանձնայատուկ նրբութիւն եւ բնական արտայայտու-

լու համար Պետերբուրգում չուտով կը հիմնվի մի յատուկ առևտրա-արդիւնաբերական բիւրօն Արեւելեան Ասիայի համար:

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ կիրակի, սեպտեմբերի 9-ին, թիֆլիսի վաճառականների աւագի ձեռնդրեցողութեամբ, հրաժեշտի ճաշկերոյթ պիտի տրվի վրաստանի եւ Իմերէթի թեմի նախկին առաջնորդ Սուրենեան արքեպիսկոպոսին, իբրեւ երախտագրտական մի փոքրիկ հատուցում այն անձն բարեբերին համար, որ Սուրենեան արքեպիսկոպոսն արել է այդ թեմին:

Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրիչները, պետական խորհրդի քննութեան են առաջարկվելու չուտով մասուկի գործերի զԷԼԼԽԱՐՎԱՐ փարչութեան նոր շտաբները: Համաձայն այդ նոր շտաբների նախագծի՝ մասուկի լրագրիչները կազմակերպուին իրարմէն զբաղուելով լրագրութեան կազմակերպման և լրագրութեան արտադրման գործերով: Սա ընդհանուր շտաբները կը շտաբանուին իրարմէն զբաղուելով լրագրութեան կազմակերպման և լրագրութեան արտադրման գործերով: Սա ընդհանուր շտաբները կը շտաբանուին իրարմէն զբաղուելով լրագրութեան կազմակերպման և լրագրութեան արտադրման գործերով:

«Новое Обозрѣніе» լրագիրը հաղորդում է, թէ Գրանձակի նախնայի պետական կարուստների փարչութեան աստիճանաւոր Գ. Մելիք-Շահնազարեան, որ նորերում ընտրված էր Շուշու զառաքաղաքի, կառավարութեան կողմից չէ հաստատված իր պաշտօնում:

Նոյն լրագիրը հաղորդում է, թէ «Ունիօն» ընկերութիւնը մշակում է էլիմիսի վանքը, ճեմարանի շինութիւնը եւ վեհարանը էլեկտրականութեամբ լուսավորելու նախագիծը: Ինչպէս ասում են, էլեկտրական լուսավորութիւնը չուտով կը մտցնուի էլիմիսում:

«С. Пет. Вѣд.» լրագիրը ասելով, Պետերբուրգում, կանանց բարեգործական ընկերութեան մի քանի անդամների եւ կանանց աշխատանքին նպաստող ընկերութեան ձեռնդրեցողութեամբ, կարճ ժամանակից յետոյ կը բացվի մի նոր տպարան՝ հիմնված ընկերական սկզբունքների վրայ: Այս տպարանում պէտք է աշխատեն բացառապէս կանայք, որոնք կը լինեն մի եւ նոյն ժամանակ եւ տպարանի բաժնետէրերը համապատասխան այն վարձատրութեան, որ նրանք պէտք է ստանան իրանց աշխատանքի համար: Տպարանին կից կը բացվի նաեւ մի ուսումնարան, որտեղ կանայք կը սովորեն գրաչառութիւն:

Մտակայում չուտով կը սկսվի հրատարակվել մի ամսագիր «Правда» անունով: Իր ծրագրով նոր ամսագիրը, ինչպէս լսել է «Рус. Вѣд.»

Թիւն նայում էք «Սեւանայ լճին» եւ ձեր առաջ բացվում է նրա կապուտակ մակերեսովը եւ նոր մշտնջող պատած երկինքը: Նայում էք «Կամուրջին» եւ տեսնում էք նրա տակից հոտող գետակի ալիքները, նրան չըջապատող ձառներն ու բոյսերը: Իսկ «Բիչերը» իր միապարզ լուծութեամբ եւ մթախառն խորհրդաւորութեամբ մի հմայիչ տպարանութիւն է թողնում: Հարկաւոր է միայն երկար դիտել... Լօնդօնի վեց պատկերների մէջ ամենից աչքի ընկնողն է № 81, որ ներկայացնում է XVI դարի նկարչին աշխատանքի քաղցին:

Տեքստի մասին, որը վաղուց յայտնի է իբրեւ շնորհալի ակվարելիստ, իր ցոյց է դրել միայն մի ջրաներկ պատկեր՝ «Քրեուհի» խորագրով: Եւ այդպէս այդ մի պատկերն էլ իր տեխնիկայի, ոճի եւ նրբի կողմից մի օրինակաւ աշխատութիւն է ներկայացնում: Ձեր առաջ կանգնած է մի պարսկացի թրքուհի վերին աստիճանի չքնաղ ու հրապուրելի վերին աստիճանի նազելի ու հմայիչ: Նա կանգնել է դեղատեղի մօզաիկաներով զարդարված բալոնում, արեւակալը ձեռքին, հարիւրաւոր արձաններից չըջապատված եւ իր ձեռքի վրա կերակրում է նրանց: Պատկերն այնքան լուսւ, այնքան բնական է, որ կարծես ձեր աչքին շարժի յետեւից երեւում է գեղանի դէմքը, կարծես ձեր ականջին հնչում է արձանների միջիւնը:

Ցաւալի է, որ մի այդպիսի շնորհալի նկարչի միայն մի պատկեր է իր ցոյց դրել, այն ինչ դեռ անցել է 1900 թ. իր յատուկ ցուցահանդէսում նա 80-ից ավելի նկարներ ունէր: Ինչպէս տեղեկացանք, նա դիտմամբ վերապահել է միւս աշխատութիւնները իր սեփական ցուցահանդէսի համար:

լրագիրը, պէտք է շատ բանով տարբերվի այժմ գոյութիւն ունեցող ամսագիրներից: Նրան մասնակցելու եւ ուսաց գրական լուսագոյն ոյծերը:

«Մշակի» երկկվայ համարում տպված «Նամակ Ալեքսանդրապոլից» թղթակցութեան մէջ մտել է մի սխալ. «Մանթաշեանի» փոխանակ պէտք է տպված լինէր «Մանդաշեան»:

ՂՈՒԻՍՅԵՑ մեզ գրում են. «Բագուցիները գնացին, գնաց եւ Բագուի նախնապետը, որ ճաշ տուեց այստեղի պաշտօնականներին, արանք էլ իրանց կողմից հրաբիրեցին նրան հրաժեշտի ճաշի: Քաղաքը դատարկվում է եւ ընդունում է իր նախկին տնօրէն եւ տաղակալի կերպարանը»:

Հին-ՆԱԽԻՉՅԵՑ մեզ գրում են. «Այս ամառ եւ ձմեռապարտեզից, երբ զիւղացիները անորոշ տարվայ իր աշխատանքի պտուղները հաւաքելու վրա էր: Անցայ Երեւանեան նահանգով, դաշտային տեղերում ցորենի բերքը միջով է, իսկ լեռներում միջակից լաւ: Խաղողի բերքը ընդհանրապէս այս չըջանում վատ է մանաւանդ նախիջևանում ու Մեղրիում: Նախիջևանում դարձան կարիւստն է վնասել իսկ Մեղրիում թողը բոլորովին փչացրել է եւ համարեա թէ ազատ այգիներ չը կան: Անցայ Կարճեան, Կուրիս, Ուշանարա գիւղերով: Այս երեք գիւղերում երաջուր մեծ վնասներ է տուել այգիներին: Այստեղ գիւղացիները պարագում են այգեգործութեամբ, չերաճապահութեամբ եւ մասամբ անասնապահութեամբ: Առաջին տարին չէ, որ արանք ջրի մեծ պակասութիւն են զգում: Բայց այս տարի արասափելի է Կարճեան գիւղի դրոթիները: Նա ունի 100 ձուկ, աղբիւրները բոլորովին չորացրել են. այժմ խնելու ջուրը վեր են առնում անասնոց ու փոքրիկ արեւից հաւաքած գետակից: Առատ տարիները այդ գետակով ոտոզում են այն անագին այգիները, որոնք այժմ անտնոյր վրա լցնելու չափ տնօր տպաւորութիւն են թողնում իրանց թառամած ու ժամանակից չուտ դեղնած տերեւներով: Այս գիւղերը մինչեւ այժմ չը դիտեն ինչ բան է յուսահատվելը: գիւղացին կուտում էր քարի եւ թուղի հետ հարթում, ծառ կանաչեցնում, իսկ այսօր նրա թուղը թուրացել են, նա չէ կարողանում նայել իր գրաստանան այգուն, թէ ինչպէս արեգակն այրում է նրան, չորացնում, ամայի դարձնում: Ետո ծանր է տեսնել գիւղացու ան ու վախը, երբ նրա ձեռքի աշխատանքը փչանում է: Բայց մի բան միթեաբական է. Կարճեանում կան ձեռնաւոր մարդիկ, որոնք մասնում են հետու լեռներից ջուր բերելու մասին. բայց ակել լաւ կը լինի, որ այդ պարտները ձեռնարկելին ջրի պահեա շինուին: վերոյիշեալ գետակը նա»:

Նշան եւանի ցուցադրած «Թիւրքական բաղնիք» միջակ աշխատութիւն է եւ տպարանութիւն չէ թողնում:

Այս ազգեանի էտիկաների որակը որոշելը բաւական դժուար է, որովհետեւ նրանք մի տարօրինակ միջակութիւն են կազմում. այսինքն նշ աշակերտի աշխատանք են ոչ էլ վարչակերտի նրանց մէջ չը կայ բանաստեղծութիւն, այն ինչ իսկական նկարչի աստուղ մի լաւ բանաստեղծ է: Պ. Այսազեան մի նկարչի է, որին պակասում է բանաստեղծական շնորհքը:

Իրա հակառակ Մ րե վ լ զ մի բանաստեղծ է, որին պակասում է նկարչի լինելը: Նրա շորտ պատկերներից ամենահետաքրքիրն է № 126-ը «Վերջին պաշտպաններ», անշուշտ ժամանակն ու անդուլ աշխատանքը կարող են նրան դարձնել մի բանաստեղծ-նկարիչ:

Բիբրուլ ցուցադրել է ընդամենը 15 պատկերներ, որոնք բոլորն էլ կովկասեան բնութեան այլ եւ այլ տեսարաններն են ներկայացնում: «Վերջին ճառագայթ» «Ղարաչայի լեռներում», «Էլեւանայի լիճը», «Գլուխարեան լիճը» եւ այլն:

Պ. Բիբրուլի տեխնիկան լաւ է, բայց նրան հարկաւոր է դեռ երկար ապրել մեր երկրում, մեր կրակոտ արեգակի տակ, որպէս զի կարողանայ իր իսկութեամբ պատկերացնել մեր ընտրութիւնը: Նրա պատկերներն այն տպաւորութիւնն են թողնում, որ կարծես նկարված լինեն հիւսիսային թանձր մշտնի աղբիւրութեան տակ: Նրա նկարներում պատկերացրած մեր լեռների վրա նկատվում է հիւսիսի ցրտաշունչ լոյսը:

Վերջացնելով մեր խօսքը նկարչական բաժնի մասին, անհրաժեշտ ենք համարում մի անգամ եւս չեղան, որ այդ բոլոր պատկերները, այդ ամբողջ բաժինը միանգամայն ուրիշ տեսք կը ստանային, ուրիշ տպաւորութիւն կը թողնէին այցելուների վրա, եթէ համապատասխան ֆօն, դասաւորութիւն ու լուսավորութիւն ունենային:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Երէկ, ամսիս 9-ին, տ. Փառանձեմ, պ. պ. Ստեփանեան, Չարիֆեան ու Մէլիք-Յուսէփեան տեղիս կուրբի դաշինում ներկայացրին «Պէպօն» տեղական սիրողների մանակցութեամբ: Մեր դերասանները անշուշտ նպատակ ունէին Գրանձակը եւս մասնակից անել այն յօրեկանական տոնախմբութիւններին, որոնք կատարվեցին ներկայ տարվայ ընթացքում մեր բոլոր աչքի ընկնող ջաղաքներում «Պէպօն» 30-ամեակի առթիւ: Եւ որոնք հասարակութեան համար մի-մի գեղեցիկ առիթ էին յայտնել «Պէպօն» արեւադր հեղինակ Սուրբուհեանցին իր բուն համակրութիւնը ու խորին երախտը, որոնց նա անպայման արժանի է: Սակայն մեր Գրանձակը այս անգամ եւս չը դաւանանք իրան ու զերտանների բարի ցանկութեան պատասխանեց կուրբ կերութեամբ յետոյ երկար արափած մարդու յօրանջամբ, չուտ եկաւ միւս կողմի վրա ու կրկին ընկղմեց իր լեթարգիական քնի, իր միմիայն փոր հաստացնող եւ ուղիղ ընթացող յուրանակալ մարմինը: Գրանձակի մի երբորդ մասն էր հազիւ գրաւված. հանդիսականներից շատերը եկել էին «ազգասիրաբար»: Որ եւ է ցոյցի մասին ի պատիւ Սուրբուհեանցի աւելորդ էր մտածել անգամ Գրանձակեցու աչքում: Շէջեան-Բագարի ձեռնարկածոր անհամեմատ ակելի հետաքրքիր մարդ է, քան տասնակ Սուրբուհեանցիները: Դերասաններից աչքի էին ընկնում իրանց խաղով Չարիֆեան, Մէլիք-Յուսէփեան, մասամբ էլ տ. Փառանձեմը: Պ. Ստեփանեանը, չը նայած, որ մեծ աշխատանք էր դործ դրած երեւում իր դերի վրա, այնքան էլ աջող Պէպօն չէր, այդ նրա յոյժերից բարձր է: Միքոյները ակել քան անգոյն էին: Չը դիտել ինչն է մեր դերասանները պատուաւոր տոնակներ էին ուղարկել ջաղաքի փողատներին ու աղբիւրներին, նոյն իսկ մի քանի տարազգի պաշտօնականներ, որոնք ի հարկէ, չէին եկել թէ իրանց մարդկային արժանաւորութիւնը եւ թէ մասնաւոր հայ բնի ոչ այնքան փայլուն պրկտիքը պահանջում է, որ մեր դերասանները միանգամ ընդմիջեա ձեռք վերցնեն այդպիսի միջոցներից»:

ՂՈՒԻՍՅԵՑ մեզ գրում են. «Մեզանում ցորենը սկսվեցին. քանի որ է, որ առատ անձրեւներ են գալիս»:

ՂՈՒԻՍՅԵՑ մեզ գրում են. «Մեզանում ցորենը սկսվեցին. քանի որ է, որ առատ անձրեւներ են գալիս»:

ՂՈՒԻՍՅԵՑ մեզ գրում են. «Մեզանում ցորենը սկսվեցին. քանի որ է, որ առատ անձրեւներ են գալիս»:

ՂՈՒԻՍՅԵՑ մեզ գրում են. «Մեզանում ցորենը սկսվեցին. քանի որ է, որ առատ անձրեւներ են գալիս»:

ՂՈՒԻՍՅԵՑ մեզ գրում են. «Մեզանում ցորենը սկսվեցին. քանի որ է, որ առատ անձրեւներ են գալիս»:

ՂՈՒԻՍՅԵՑ մեզ գրում են. «Մեզանում ցորենը սկսվեցին. քանի որ է, որ առատ անձրեւներ են գալիս»:

ՂՈՒԻՍՅԵՑ մեզ գրում են. «Մեզանում ցորենը սկսվեցին. քանի որ է, որ առատ անձրեւներ են գալիս»:

ՂՈՒԻՍՅԵՑ մեզ գրում են. «Մեզանում ցորենը սկսվեցին. քանի որ է, որ առատ անձրեւներ են գալիս»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

«Պաղարկութեան միջազգային կոնգրէսը օգոստոսի 29-ի նիստում քննում էր հայերի կուսարանները թիւրքալայում եւ վճռեց դիմել Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին, պահանջելով, որ նրանք պաշտօնական կոնֆերենցիա գումարին հայկական հարցը լուծելու համար: Հայաստանից եկած պատուիրակը պաղարկեցում էր, թէ տեղի լաւ է բաւականաւոր ներգործութիւն անելով, որովհետեւ կոնֆերենցիան ոյծելը գործադրութիւնը նոր կոտորածի պատճառ կը դառնայ:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Կ. Պոլսում բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցան դիմախտային ուսուցիչ պատճառով, որը պատահմամբ հողից հանել կան մի հայի տան այդու մէջ խաղացող երեխաները Պէրայում: Ձերբակալված են տան մէջ բռնակալող երկու հայ ընտանիքներ եւ չըջակներում ընկալող շատ հայեր: Թուրք սակաւ բոլորովին անվստահ մի բան էր եւ ըստ երկույթի մի քանի տարի թնայված է եղել հողի մէջ:

Կ. Պոլսի յունական եւ հայկական լրագիրները տպում են յոյն միլիոնատէր Պապէլ Ստեֆանովիչի մահաուսուցանները, որը յայտնի էր իր ընդարձակ քարեգործութեամբ: Պապէլ Ստեֆանովիչ իտալական հպատակ է: Լրագիրներն ասում են, որ նա իր ամբողջ կարողութիւնը՝ 30,000,000 ֆրանկ-կառուել է իր ազգակիցներին թիւրքալայում եւ Յունաստանում: Որովհետեւ նա մեծ մասամբ տպում էր Լօնդոնում, նրա կապակը պահվում է Լօնդոնի իտալական հիւպատոսարանում: Իր կեանքի ժամանակ Ստեֆանովիչ պահում էր 50-ից ավել թուրքալայի դաշնագրաւ բարձրագոյն դպրոցներում եւ մօտ 30 տարի տարեկան 20,000 ֆունտ ստերլինգից ավելի նպաստներ էր տալիս զանազան ազգութիւնների պատկանող խնձրկաններին: Նոյնպիսի ատաստեղծութեամբ յայտնի է նրա Ծանկօ եղբայրը, որը ակել է մեծ հարստութիւն ունի:

Ամերիկական լրագիրները լիքն են այնպիսի յօդուածներով, որոնց մէջ առաջարկվում են միջոցներ անիշխանականութեան դէմ մաքառելու համար: Մեծամասնութիւնը հիւսուստացնում է, թէ անիշխանականութիւնը մի աւելորդ է, որ յատուկ չէ Միացեալ-Նահանգներին, այլ բերված է այնտեղ գրքից, Եւրօպայից, ուստի եւ հարկաւոր է օտման դնել եւրօպացիները գաղթականութեան դէպի Ամերիկա: Մաքառումը անիշխանականութեան դէմ Միացեալ-Նահանգներում դժուարանում է այն պատճառով, որ համարեա բոլոր շտաբներում օտարականութիւնը վայելում է անասնան ազատութեան Այդ անպարտութիւնը վերացնելու համար հարկաւոր է փոփոխութեան ներթարկել անասնապարտութիւնը:

«Neue Freie Presse» լրագիրը աշխատակիցը մի խօսակցութիւն է ունեցել Վիեննայի ամերիկական զեսպան Մակ-Կարմիրի հետ, որի մէջ դեպքան յայտնել է, թէ անիշխանականութիւնը եւ բաւականաչափ բաղձման են Միացեալ-Նահանգներում, բայց չունեն որովհապակցութիւն եւ չեն կազմում մշտական խմբեր: Անդրադաշնակեան հանրապետութեան շարունակական արժեքով կապ եւ առնչութիւն ունի նաեւ զեղարուեստի հետ:

Այդ պանօրաման զետեղված է մի լայնարձակ շինութեան մէջ, որ բազմանկիւն պրիզմայի ձեւ ունի:

Ան դիտելու արժանի առարկայ, ան նրա ներառական էր հմուտ ձեռք արտադրութիւնը Մտնում էք ներս, մտք ու զարթուող սան դուղներով բարձրանում էք վերեւ եւ ձեր աչքի առաջ բացվում է մի հրապուրելի տեսարան: Նստեցէք աթոռի վրա եւ մի քայլ անթարթ նայեցէք ձեր շուրջը:

Ան կապից կապուտակ ծովը իր բազմաթիւ նաւերով ու նաւակներով, անա ծխախան երկինքը, անա եւ Սեւ քաղաքը իր բազմաթիւ նաւթային գործարաններով, լճակներով ու խողովակներով: Նայում էք այդ ամենին տեսնում էք փողոցներում երթեւեկող կառքեր, ուղտերն ու շները, տեսնում էք ծխացող իննիւրայները, այս ու այն կողմ խաղալի կան անասնակի կանգնած մարդկանց եւ այդ բոլորից յետոյ volens-nolens ձեր մէջ հարց է զարթնում. «արդեօք իսկական Սեւ քաղաքն է ձեր աչքի առաջ, թէ միայն մի պատկեր, մի պանօրամա: Իլլուզիան ակել կը լինէր, եթէ տեղը մի քիչ մեծ լինէր եւ նախ քան պատկերը բնական մի շերտ լինէր շինված հողից զարից եւ այն, ինչպէս առհասարակ ընդունված է անել պանօրամաներ պատրաստելու»:

Այդ պանօրաման ցուցահանդէսի ամենահետաքրքիր մասերից մէկն է: Անպայման հարկաւոր է տեսնել նրան (բայց է ցերեկվայ ժամը 10-6. մուտքի վճարն է 10 կօպ., որ հաւաքվում է ջօզուտ թիֆլիսի ալեգործական դպրոցի) Ե. թ.

որեն ընդերք թող են տարիս ամեն ասորոս խոսել և գրել անասանակ աղատութեամբ: Այս պատճառով էլ անխնայանակները հայեացքները կարող են արտայայտվել բաց և յայտնի կերպով, բայց եթէ անխնայանակները խօսքից գործի են անցնում, այն ժամանակ ենթարկվում են հայածանքի, որ թելադրում է օրէնքը: Այսպէս, մի քանի տարի սրանից առաջ, երբ անխնայանակները փորձ փորձեցին Չիկագոյում խօսքից գործի անցնելու, ձերբակալվեցին և կառավարչին բուֆֆալոյի սպանութիւնը, շատ անասանակ է, որ մի անձնաւորութեան գործ լինի միայն: Դեպքանք կարծում է, որ հասարակական կարծիքը Միացեալ-Նահանգներում կը պահանջէ, որ վերաբնակին այն բոլոր օրէնքները, որոնք վերաբերում են քաղաքական յանցաւորներին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՌՈՒՑԻՅ ԶՐՈՅՆԵՐ

Յուցանանքի թատրոնում արդող վրանակներ մասին մեք ամբողջ անցանք խօսելու: Այդ կողմից ոչինչ նորութիւն չը կայ: Ամեն երեկոյ կրկնվում է նոյն աստուածարձկանները և երբ հասարակութիւնը բուն ծափահարութիւններով դուրս է կանչում զերբասանակներին, նրանք իրանց շնորհակալութիւնը յայտնում են եզրակնոյնով տալով, որ շատ արմատական բան է, որովհետեւ երբ գերաւորեալը գլխիկար է դրած, նրա ներկայացուցիչներն էլ պէտք է դիմելու կանգնելու: Այս անգամ ևս ուզում են խօսել զրական վրանակներ մասին, որի համար մի նոր ու յատուկ բան է ստեղծել պ. Ս. Հախումեան Պարիզում, Եւրոպական աստուած:

Ձեռ լիւրում ո՞վ մի ժամանակ այդ պիտանք վերաբերողներն Ս. Հախումեանին համեմատել էր Եւրոպական Վոլիերի «Les précieuses ridicules» պիեսի հետ լաբէլ Մաքարիի հետ, որ ամեն բան դիտել առանց ոչինչ սովորելու:

Կատարելա Մաքարի: Զորս խօսքից մէկը դիտարկում է, զխառտը յարձակումը այն է, որ հակաակորդը բարձրակարգ ուսում չունի, թէկուզ այդ հակաակորդը տարբար քրքրէ կարգապահ լինի, որքան մեք, մեծ մասամբ ողորմելի, համարաբանականութեամբ, բայց որ հայտնի փորձ անեք, կը տեսնեք, որ ինչ այդ դիտարկման անունից խօսող վրանակարգները, զարգացման ամբողջ պարզը ձեւարանի սխալակալական շրջանի շարք դասարաններում սովորածն է մի քանի բնութիւններ, որոնց մէջ միակ լուրջ ծեօնելի հատորներ հատուածներն են, որոնց այնպէս շահագործել, եթէ կարելի է ասել, նոյն իսկ շարքործել է այդ վրանակարգութեամբ իր յարձակումների մէջ Եւրոպայում՝ Եւրոպայից զեւր և յետոյ Եւրոպայից՝ Եւրոպայում՝ Եւրոպայից զեւր:

Վրանակներ, զխառտի մի բերան բարձուն է այդ պատիւն, բայց ինչպէս կը տեսնենք իսկոյն, տղա զիտութիւնը բարձրագոյն բազմած է նրա ամապրում և լատկապէս նրա յոտուածներում:

Մնչպէս յայտնի է, կան վրան զեւր կամ վրանցած հրապաններ, որոնք երբեք բնած նշանին չեն խրվում և միշտ վրանցած են: Կան նոյնպէս և ինքեքր, որոնք բնած վրան վրանցած կան նաև տղաութեան պատճառով միշտ շնչվում են ճշմարտութիւնից և անթիւ սխալներ են անում ամեն քայլով իրենք:

Այդպիսի խելքի տէր է և «նոր խաղաղակար», և անա ասացում են մի շարք կողմորներ:

Չիտանալը դառնում է Քուրդիայի հայրենիք, Ապոլոնի Մալիօլը հոշակվում է իր ծծիկը ժամանակ արդէն ազատված սերերի ու լուրերի արտասովորական սկզբնապատճառ, յայտարարվում է անուց զրականութեան պետ լինելով յամենայն դէպս երկրորդ կարգ լատկապէս և մեռնում է իր իսկական մահից երեք տարի յետոյ (պ. Ս. Հախումեանի յոտուածի աղբիւրը, երկու գրած է եղել Մալիօլի մահից մի տարի շնչացած), ամբողջ մահնդական աշխարհը դուրի է լատկարարվում զղաղակալական պահանջից (որովհետեւ պ. Հախումեան մի տեղից լսել է, որ մահնդական կրտսեր զեւր է արձանագրութեան և կենդանացութեան, և այդ բանը ընդհանրացրել է ամբողջ զերբարեւոտի վերաբերմամբ), Պետրոս Ամինացիին զոտուած է Տալիօլայի (պ. Հախումեան, Պարիզում նստած, Քուրդի և զրում, որովհետեւ այդպէս է տրված Ն. Սիմոնեանցի անընդհանրեան ձեռնարկի մէջ), Շելլին «իմա է անուց» Սրման Սիլիօլայի «տաշտի յարանութիւնը շարժում են և թնայութեամբ զեւր պիտան են նրանց յզգայնակները»: Միխիլայ Սերբասացիին դառնում է Եւրոպայի լատկարարները և այլն:

Այնուհետեւ, «ի՞նչ երեկոյ» թարգմանիչ է պ. Հախումեան:

Ապոլոնի Մալիօլը գրում է.

Вокруг ихъ — снръжъ обороны —
Толпоу ридари стоеть.

Այսինքն նրանց (զրբերի, բարձունքի և այլն) շարժը խառտ կանգնած են արբերի (թողելի) պատուպան ասակները:

Իսկ պ. Հախումեան թարգմանել է.

Եւ ասակները կանգն ապալարի
Շրջապատել է կանա թողելի:

Մալիօլը գրում է «обращенный еретикъ», իսկ Հախումեան ասանց այլ և այլովեան թարգմանում է արդակի «հերետիկոս»:

Մնա և պ. Հախումեանի արձակ ոճը:

«Մի արխարար քաղաքի մարդը» — Մալիօլի
տախտակները պատասխանեցին: — «Մի քիչ շայտած
սերանի վրայի լուրով, որի վրայ էին եկել» — Եւ
պատրաստ եմ ձեր արամազութեանը: — Պողոստուած
պատասխան է մի կաթիլ, բերեղցած: — Շալաբուլ է
կայր Արխարարի աչքերը — մինչև կարողեան աստի-
ճան: — Բայց եթէ մարդը կանգ է անում ճրագի ա-
ռաջ, ուրճաբը լուսատուում է նրա լեռներ և իր

շարժը, նա ծնում է Կատարի մէջ, չէ կարողանում առանձնակ և կենքը կանգ է անում»:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԳՐԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒԹԻՒՆԵՐ

6 սեպտեմբերի
ԿՕՄՊԻՆ: Ռուսաց Կայսերական Զոյգը նախագահական գնացքով ժամանեց այտեղ երեկոյան 8 ժամին և դիմաւորվեց անկարազրկի ուրախութեամբ: Ամբողջ ճանապարհի վրա, 340 կիլոմէթր արարձուկեամբ, Կայսերական գնացքն անցնում էր մարդկանց խիտ բազմութիւնների մօտով, որոնք եկել էին Կայսրին և Կայսրուհուն ողջունելու համար:

Ոչ միայն քաղաքները, այլ և երկաթուղու երկարութեամբ գտնվող բոլոր գիւղերը զարգարված են զբոջակներով: Ժողովուրդը բուն թափով ողջունում էր բարեկամ գաղանկից ժողովրդի անբեկալ Պետին: Կոստիկը ներկայացրեւ է կախարդական պատկեր, շնորհու հոյակապ զարդարանքի և ամբողջ ազգաբնակչութեան ուրախութեան, որը երջանիկ է նրանով, որ ընդունում է Կայսերական Հիւրերին: Դիւնկիրից: Լուրէ բաժակաւոր ասեց մի փոքր յուզումներով. նրա խօսքերը ընդունվեցին համեատ քրքրվածներով: Քաղաքի Կայսրուհին, արտաբարձված այդ խօսքերից, որ Լուրէ նուրից նորին Մեծութեան, ողորմաժաբար ժպտաց Բարձրացնելով բաժակը, Թագաւոր Կայսրը խօսեց մեծ պարզութեամբ և հաստատ ձայնով:

Դիւնկիրից: «Շտանգարտ» նաւը անցաւ սահանալիկը 1 ժամ 35 րոպէին ժողովրդի ողբերկով բացաղանջութիւնների ուղեկցութեամբ: Բազմազան 3/4 ժամ «Շտանգարտ» նաւը ամին Ժողովուրդը. համար: Լուրէ, կառավարութեան անգամները, ուսուց դեպքանք, սենատորները, պատգամաւորները և Հիւսիսային ղեկաւորամէտի բարձր ինխանութիւնները արդէն գտնվում են ծովափի վրա: Առաջինը նախի իջնում է Կայսրուհին, որին հետեւում էր Կայսրը: Լուրէ ներկայացնում էր մինիստրներին, որոնք խորը դուրս են տալիս: Ամբողջ բացաղանջութիւններով ողջունում է Նոյա Կայսերական Մեծութիւններին, որոնք շնորհակալութիւն են յայտնում, ժպտալով թեքելով գլխերը: Մէքը մատուցանում է աղ ու հայ: Լուրէ՝ ճանապարհի է գտնում Նոյա Մեծութիւններին ղէպի անուարական պալատում պատրաստած սենեակները: 2 ժամ 45 րոպէին Նոյա Կայսերական Մեծութիւնները դալիս են բանկէտ: Բանկէտը վերջանալուց յետոյ Նոյա Մեծութիւնները, Լուրէ և Նոյա օվիտանները հետանում են դաշիճից և նստում են նախագահական գնացքը հենց շինութեան առաջ: Գնացքը շարժում է ղէպի Կոստիկն 4 ժամ 4 րոպէին ժողովրդի «ցնծութիւնների ուղեկցութեամբ»:

ԲԵՅՄԱ: Ամբողջ Ֆրանսիան տօնում է Յարի ժամանումը: Հայրենասիրական արամազրութիւնը ժողովուրդի է ներքին տարածալուծիւնները: Մեծ քաղաքների և Դիւնկիրիցի օտախաղաղութիւններում գերակշռում են ուսուցական էնթուզիսները: Ծախվում են բազմաթիւ բուտոնիները ծաղիկներով շրջապատված Կայսերական Զոյգի պատկերով: Պարիզում լրագրիւնի խմբագրութեանը նոյնպէս լուսավորված են: Մամուլը պարծնում է նրանով, որ ինքն յատուկ լոգնաւ ունի և որ նա առաջինն է ողջունում Թագաւոր Կայսրին: Փողոցներում երգվում են Ռուսաց Թագաւորին փառաբանող երգեր: Կազմված է ժողովրդական տօնակաճառ, որի մուտքը պէտք է գործադրվի նպատառ ուս և ֆրանսիացի վերաբորձների Չիտանալում: Ամենքը հիացած են կենացների փոխանակութեամբ, որոնք հաստատում են, թէ այնպիսիներ մասնաւոր նուիրված էր ղոգրեւ և նաւատարմին: Երկկան անձրեկից յետոյ այսօր փայտն արեւ է:

ՄՕՍԿՎԱ: Մոսկվայի քաղաքապետը, ի պատասխան իր ողջոյնագրի, ստացաւ այսօր Դիւնկիրիցի մէրից հետեւեալ հեռագրը. «Ժամ ընկերները և ես խորին կերպով զգացված ենք բարեկամութեան ձեր սիրովը յայտնում զզգացմունքներով ղէպի մեր քաղաքային վարչութիւնը, Դիւնկիրիցի քաղաքը և ղէպի ամբողջ Ֆրանսիան: Ողջունելով այժմ իրանց սգեւորված բացաղանջութիւններով Նոյա Կայսերական Մեծութիւնները Թագաւոր Կայսրին և Թագուհի Կայսրուհուն, մեր ազ-

գաբնակութիւնը և մեզ մօտ հաւաքված հազարաւոր ընկերները ամենափառաւոր կերպով նորից վկայեցին իրանց բուն համակրութիւնը ղէպի ձեր ազնիւ ազգը: Կեցցէ Ֆրանսա-ուսական դաշնակցութիւնը: Կեցցէ Մոսկվա քաղաքը»:

Սեպտեմբերի 6-ին սեւով պատած անգլիական եկեղեցում Մակ-Կիլիէյի համար տեղի ունեցող հոգեհանդեսան պատարագին ներկայ էին մարաքաղաքի իշխանութիւնները և հիւպատոսները:

ՊԵՆՁԱ: Հրդեհներից աւերված քաղաքը սեպել է կրկին վերաշինվել: Հիւանքի և որմնադիրների մեծ պակասութիւն է զգացվում:

7 սեպտեմբերի

ԼՕՆԴՈՆ: Կիպրիսի հեռագրում է Պրէատրիայից. «Մայր Գուգ, հետեւակ զօրքի երեք վաշտով և երեք թնդանթով հետախուզութիւն կատարելով ղէպի հարաւ: Ուարէխալից, նկատեց երեք հարիւր բօթերներ: Անգլիացիները իջան ձիերից և վազեցին ղէպի այն ըլուրը, որ արհաւիրեւ: Թշնամիները վրա բօթերի շարժումը, երեւի, խորամանկութեան վրա էր հիմնված, որովհետեւ նրանք լանկարձ յարձակվեցին Գուգի վրա ալ թեւից: Բօթերները մեծ թւով ապահով տեղ էին կանգնած և խիտ կույց յետոյ յաղթեցին անգլիացիներին: Մեր կորուստն է—երկու օֆիցեր և 14 զինուորներ սպանվեցին, հինգ օֆիցեր և 25 զինուորներ վիրաւորված են, 5 օֆիցեր և 150 զինուորներ գերի են տարված: Յրէնչ հաղորդում է, որ Սմոտա, ցանկանալով զօրքի մէջանդից կարելի անցնել, յարձակում գործեց ուղանալի էսկադրանի վրա էլանգարի վրա մօտ, Տարկիստալից ղէպի արեւմուտքը, որի ժամանակ սպանվեցին 3 օֆիցեր և 20 զինուորներ և վիրաւորվեցին հրամանատարը և 30 զինուորներ: Էսկադրանը մեծ քաղաքեամբ էր պաշտպանվում և ծանր կորուստ պատճառեց ինքնուրու, որ կասկանք կրելու պատճառով, մտորեցրեց մեր զօրքերին: Մեր զօրաբաժինները հայածում են նրան»:

ՅԻՆԿԵՆՍԻՐՈՐԳ: Առ այժմ կայացած որոշումից երեւում է, որ բրիտանական թագաւորը և թագուհին ճանապարհ կընկնեն երկուշաբթի, 1 ժամին կէսօրից յետոյ:

ԲԵՅՄԱ: Նաւանդեհները հոյակապ պատկեր էին ներկայացնում: Կրակի գործադրութիւնը հիանալի է: Յարձակումը վիրտի բարձրութիւնների վրա մեծ վճռականութեամբ և զգուշութեամբ կատարվեց: Պաշտպանութիւնը կան եռանդուն էր, որի պատճառով նաւանդեհների վերջը դանդաղացաւ. և զրա հետ էլ միասին ուշացաւ Բէյմի այնպիսիները: Գաղաքը մեծ ճաշակով է զարդարված. կան շատ կանաչներ և ծաղիկներ, նոյնպէս և յաղթական կամարներ «Պաղաղութիւն», «Գաղանկութիւն», «Պետրոս Մեծ» ստեղծով, որոնք կազմված են ուսուսակ պատերով:

ԲԵՅՄԱ: Կոստիկն գալուն այն Ռուսաց

Կայսերական Զոյգը չըջապատեց հրճվող ամբողջով: Անհարթին է նկարագրել ազգաբնակչութեան ուրախութիւնը: Երբեք ազգերի ոչ մի պատական շրջանում դեռ եւս օրինակ չէ եղել, որ օտար միակեաները ողջունվեն ամբողջ ժողովրդի կողմից, ազգաբնակչութեան բոլոր դասակարգերի միջոցաւ: Ողաժարեկանց կանանց և երեխաների կողմից—Կոստիկի պալատը ղետեղված լինելով մի հրաշալի տեղում, երկու ֆատաղ ունի, որոնցից մէկը նայում է քաղաքին, իսկ միւրը—այգու սերբասին: Ռուսաց Կայսերական Զոյգը դրաւած ունի շինութիւնը 40 պատուհաններով, որոնք նայում են սերբասին: Ֆրանսիան երջանիկ լինելով նրանով, որ ընդունում է Արքայական Հիւրերին, Բարեկամութիւնը և Գաղանկներին, գործ զրեց իրան յատուկ նուրբ ճաշակով այդ շինութեանը պատշաճաւոր և Կայսերական-Զոյգի այգուղմնալու արժանաւոր տեսք տալու համար: Ամբողջ կանկարաւիքը պատմական քաւարութիւն է կրում, վերաբերվելով XVIII-դ դարի վերջին և առաջին կայսրութեան շրջանին: Նոյնը պէտք է ասել գեղեցիկ լինելի վրա գտնվող և հրաշալի տեսք ունեցող մեծ դաշիճի, Նապոլեոնի նախկին ասանձնատեղեակի, առաջին ունկնդրութեան դաշիճի, և Լուիսօվիկոս XVI-դի նախկին ննջարանի մասին: Իւրաքանչիւր սենեակում իսկական հրաշալիքներ են գտնվում, բայց Կոստիկի պալատի գլխաւոր հարստութիւնը դարաշրջանների ամենաթանգալին նմայներ են ներկայացնում: Հրաշալի գորգներ և պատկերներ կան առաստաղների վրա, ոչ պա-

կառ նշանաւոր են պաննօները իւրաքանչիւր սենեկում. աչքի են ընկնում հռչակաւոր նրկարիչ ժիրոզի նկարները, ամենաւեր նրա առաստաղանկարը չորս այլաբանական ֆիգուրաներով, որոնք պատկերացնում են պատերազմը, արդարութիւնը, ոյժը և պերճախօսութիւնը, զարդարում է բանուրի կարկնաւոր: Լուիսօվիկոս XVI-դի արձանում դաների վրա կան Հէնրիկ IV-ի, Լուիսօվիկոս XIII-ի և Լուիսօվիկոս XV-ի պատկերները, գործ Մովսիսի: Ոչ պակաս նուրբ ճաշակով են երկու սալօններ, կապոյտ և վարդադոյն, պատած ծանր մետաքսէ կտորներով և զարդարված հրաշակաւոր գորգներեան գորգերով: Կահաւորութիւնը և մանր առարկաները ամենանուրբ արուեստի արտադրութիւններ են: Ամենից աւելի հիացնում է բրոնզեայ ժամացոյցը այլաբանական արձանախմբերով, որոնք ներկայացնում են Նապոլեոն I-ի հարսանիքը: Այս առաւօտ, 8 1/2 ժամին, Նոյա Մեծութիւնները, մինիստրներ և գնեքաւորների ուղեկցութեամբ, ուղևորվեցին Ֆրէնտաւ ներկայ լինելու Ֆրանսիական զօրքի մեծ զօրանդեհին, որին մասնակցում են ամեն տեսակ զենքի հարիւր հազար մարդ: Վիրտի ամբողջում, սարահարթի վրա, կատուցված է անգլիս մեծութեան Կայսերական վրան, որանդից հայեացքով կարելի է ընդգրկել պարզութեամբ զօրքերի գործողութիւնները, որ նրանք կատարում են գնեքաւորի մօտ Բրիտէյի ղեկավարութեան տակ զարմանալի արուեստով: Մա առաջին անգամն է, որ զօրանդեհներում գործում է 150 հազար զօրք: Այսպիսի օրի համախմբումը այնքան կարճ ժամանակամիջոցում համարվում է մեծ առաջադիմութիւն, մասնաւոր այն պատճառով, որ զրա համար շնորհապատեց ներկաւորական սովորական երթեւեկութիւնը: Այս հիանալի տեսարանը թողնում է անջնջելի տպաւորութիւն, ցոյց տալով Ֆրանսիական բանակը ուժեղ իր դիմացկանութեամբ և կարգապահութեամբ: Երեք ժամվայ ընթացքում Թագաւոր Կայսրը ընդհանուր շտաբի յատուկ քարտէսով հետեւում էր զօրանդեհի շարժումներին, որի ժամանակ ֆրանսիական զինուորական մինիստրը երբեմն բացատրութիւններ էր տալիս ժամը 1-ին նոյն անգամ վրանում, նոյն սարահարթի վրա, նախաճաշ տրվեց, որին ներկայ էին, բացի մինիստրներից և գնեքաւորի մօտ Բրիտէյից իր բազմաթիւ շտաբով, նաև զինուորական զորակալ Լազարելը, նոյնպէս մինիստր կոմս Լամզորֆը և ղեպալան իշխան Ռուրսօվը: Ժամի երկուսն էր, երբ Ռուսաց Կայսերական Զոյգը բաց կառքով ճանապարհը ընկաւ ղէպի Բէյմա Նոյա Մեծութիւնները նախ ուղևորվեցին դուռան ժողովրդի ցնծալից աղաղակների ուղեկցութեամբ, իսկ այնտեղից, ընդունելութիւնից յետոյ, այնպիսի մայր եկեղեցին, որի դիտումը մօտ մէկ ժամ տեւեց:

ԿՕՄՊԻՆ: Գնացքը Լուրէ նախագանով և Կայսերական Զոյգով ճանապարհ ընկաւ Բէյմա՝ բազմաթիւ ամբողջ ողևորված բացաղանջութիւնների ուղեկցութեամբ: Եղանակը զեղեցիկ է:

ԲԵՅՄԱ: Պաշտօնական գնացքը 9 ժամ 50 րոպէին ժամանեց Ֆրէնտաւ կայարանը, Բէյմա-ի մօտ, որ կառուցված է Կայսերական Զոյգի ճանապարհորդութեան տրիթով: Լուրէ՝ ձեռքը տուեց Կայսրուհուն՝ պատուաւոր զաշիճը անցնելու համար: Կայսրուհին կառք նստեց աստաղաւորակ հետ միասին, իսկ Կայսրը կալէրգարդեան համազգեստով նստեց երկրորդ կառքը: Լուրէի հետ միասին Հանդիսատեսները դիմեց ղէպի Վիրտի ամբողջը, Բէյմաի մօտ՝ մեծ զօրանդեհների վերջին գործողութիւններին ներկայ լինելու համար:

ԲԵՅՄԱ: Ժամը 5-ին Նոյա Մեծութիւնները և Լուրէ, վերադառնալով Վիրտի ամբողջից, ողևորված բացաղանջութիւնների միջով ժամանեցին քաղաքային տունը, որ զարդարված էր ուսուց և ֆրանսիական գոյնի զբոջակներով: Հանդիսաւոր դաշիճում աչքի էին ընկնում Մոսկվայի քաղաքապետի ուղարկած երկու զբոջակները, որոնք կային Կայսր Նիկոլայ II-ի արքադան թագաւորութեան ժամանակ: Նոյա Մեծութիւնները և Լուրէ՝ ճանապարհ ընկան Բէյմայից 6 ժամին, նախապէս այնպիսով, պաշտօնական ծրագրի համաձայն, քաղաքային տունը և տանաւոր և ինտ դառնալ սկսեցին Կոստիկն, ուր պէտք է ժամանեն 8 ժամին:

ԲԵՅՄԱ: Նոյա Մեծութիւնները և Լուրէ հետադան քաղաքային տնից 5 ժ. 25 ր. և անցան քաղաքի մի մասով: Անգլիս բազմութիւն

է հաւարդիկ եւ անկարգութի հրճուանք է
 տիրում. անընդհատ լսում են ցնծութեան ա-
 զաղակներ, փողոցները եւ անբր կտորները
 լինեն են բաղձութեամբ. կանայք թաշկինակ-
 ներն են թափ ապրիս, տղամարդիկ զխարկնե-
 րը, երեխաները՝ փոքրիկ ուսական դրօշակ-
 ներ: Երբ որ հանդիսուոր զնայքը հասաւ ե-
 կեղցուց դաւթին, մեծ զանգը սկսեցին խփել:
 Մուտքի մօտ կանգնած էր կարգինալ Լանժէ-
 նիէ, չըջապատված՝ հանդիսուոր կերպով զգե-
 սաւորված կրօնաւորներով: Երեսնութեան ճա-
 կատը զարդարված էր կայսերական դրօշակով:
 Կարգինալը ողջունեց Նոցա Մեծութիւններին:
 Տաճարը մտնելիս, տասներկու փողուոր մեծ
 երգեհոնը նուագեց կիօղվիզի հանդիսուոր
 քայլերը: Կարգինալը ցոյց տուեց Նոցա Մե-
 ծութիւններին սուրբ միւսոնով սկիւր եւ մա-
 սուկները, Կենարար խաչի մի կտոր եւ փշեայ
 պատկի մի փուշը: Ռուսաց կայսրը եւ կայսրու-
 հին զիտուած էին այդ նուիրական իրերը մեծ
 հետաքրքրութեամբ: Տաճարում պահվող թան-
 գազին իրերը ցոյց տալուց յետոյ, կարգինալը
 մատուցեց զիստու համար տաճարի տեսա-
 բանների լուսանկար յարձր եւ քաղաքային
 տանը պահվող պաւստական աւետարանի հե-
 լիօգրաւիրան: Կարգինալը ներկայացրեց Նո-
 ցա Մեծութիւններին Սէտուա արեղային,
 որին ձեռք տուեց կայսրը, յիշեցնելով, որ ար-
 զէն տեսնել է նրա հետ 1896 թ.ին Պարիզի
 Աստուածածնի տաճարում: Տաճարի զիտուածը
 վերջացաւ 5 ժ. 45 րոպէին. երգեհոնը նուա-
 գեց ուսաց օրհներգը եւ «Domine, salvam fac
 republicam». Նոցա Մեծութիւնները, ար-
 ժանացնելով կարգինալին ձեռք տալու, զնա-
 ցին կայսրան, ողջունելով ժողովրդի կող-
 մից, ինչպէս եւ զալու ժամանակ, ոգևորված
 ազաղակներով: Կայսրանուս Ռուսաց կայսրը,
 նկատելով գեներալ Բրիւլէիին, իր հիացմուն-
 քը յայտնեց նրան զօրքերի հրանայի պահ-
 ւածքի համար, որին արանատես եղաւ ինքը
 Վարի ամրոցից վերադառնալու ժամանակ:
 Երբ Նոցա Մեծութիւնները եւ Լուրէ ժամի-
 6-ին ճանապարհ ընկան, թնդանօթաձուլութիւն
 եղաւ եւ նուագվեցին ուսաց եւ ֆրանսիա-
 կան ազգային օրհներգները:

Խմբագիր Ա.Լ.ԲԱՍՆԻՆԻ ԲԱՍՆԻՆԻ
 Հրատարակիչներ Թ.Ա.ԳՈՒՂԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
 ԻՍՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԿԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Մարտինի
ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՅ
 ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
 Առաւօտեան ժամը 9—2
 Երեկոյեան ժամը 5—7
 Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի
 (հ. 4.) 4—60

Գ Պ Ր Ո Ց
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
 երկու սեռի մանուկների համար: Ընդունվում
 են երեխաներ պատրաստականի բոլոր բաժան-
 մունքները եւ նոր բացվելիք առաջին
 (աղջիկների համար երկրորդ) դասարանը: Ա-
 ղակերանների թիւը սահմանափակված է: Դիմել
 օգոստոսի 26-ից: Բնհրճութեան (Նօյօ-Մադօ-
 վայա) փող., սեղ. ա. № 29: 18—20

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
ԳԷՈՐԳ ԹԱԴԵՈՍԵՄՆ
 ներքին եւ երկխոյոց հիւանդութիւններ:
 Ընդունում է ամեն օր, առաւօտեան 9—11
 ժ., երեկոյեան (բացի կիրակի օրից) 6—7 ժ.:
 Վէժամիսօվակայա փողոց, տ. 24:
 2—5 (հ. շ. ե.)

Զ Ո Ւ Խ Ա Ճ Ե Ա Ն
 ընդունում է աշակերտահիններ կար ու ձեւի
 եւ եւրօպական ձեռագործների համար, սեղ-
 տեմբերի 1-ից:
 Վեժամիսօվակայա փողոց, № 14, տուն Ե-
 ղազարովի (հ. հ.) 8—8

ԲՈՂԿ ՎԱՀՆԵ ԱՐՃՐՈՒՆԻՆ
 վերադարձած լինելով հանքային ջրերից, վեր-
 սկսել է հիւանդների ընդունելութիւնը իր
 նախկին բնակարանում: Արդիւնակայա փո-
 ղոց, տուն Մօլիանովի, № 12: 5—5

Կ Օ Ն Ց Է Ր Տ
 Այսօր, երեկոյեան ժամը 9-ին,
 ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
 կայանալու է հայ երգիչ Գէորգ Ամիրեանի
 նուագահանդէսը, մասնակցութեամբ յայտնի
 ֆրանսուհի երգչուհի օրիորդ Ժօսէի:
 1—1

ՅԷՆՁԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻԶ
 Քաղաքային երկրաբան ուսուցչի եւ զինա-
 ղիայի հայոց լեզուի ուսուցչի իրաւունքներով:
 Տալիս է մասնաւոր դասեր հայոց եւ ուսաց
 լեզուներից եւ թուրքարեւելից: Ցանկու-
 թիւն ունի ծառայել նաեւ հայոց պարօններում:
 Հասցէ՝ Тифлисть, Троицкая улица, домоъ
 № 11, кв. Мелкумова. 1—5

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ
ԳՐԱԿԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՀԱՌՎՈՒՄ ԵՆ
 «Միթթար եւ Միթթարեան յօրեկան» գ. 2 ր.
 «Միթթարի պատկերը առանձին» (իւղան.) 30 կ.
 «Հայոց պատմութիւն» պատկերազարդ, Հ.
 Թերթիանեանի 40 կ.
 «Նոր մեթոդ ֆրանս. լեզուի», Ե. Յովհաննի-
 սեանի 1 ր.
 Առողջապահութիւն առանձին, Տաղաւար. 2 ր.
 «Տարեք առողջապահութեան», Մամուր. 40 կ.
 «Գործնական քերականութիւն» անգլիերէն լե-
 զուի, զօլտօր Կարգիլ 1 ր.
 «Դասագիրք փիլիսոփայութեան», Էթմէքճ. 1 ր.
 Դիմել Тифлисть. Книжный магазинъ „Гут-
 тенбергъ“ (Лорисъ-Мелковская улица, № 11),
 Г. Галустану. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
 արանով յայտարարում է, որ իր առեւանում
 այս սեղտեմբեր ամսի 10-ին, ցերեկվայ ժամի
 12-ին, նշանակված է աճուրդ կապալով աալու
 համար մօտ 57,00 պ. սաժ., հաս. 0,25x0,16
 պ. սաժ. բէտօնէ կոյուղու շինութիւնը Կիր-
 պիկայա փողոցում, ջրանցքային փողոց-
 րի մօտ գոյութիւն ունեցող կոյուղուց, մի եւ
 նոյն փողոցով, մինչեւ Սուրբօվայի տունը, 880
 րուբլով: Աճուրդին մասնակցել ցանկացողները
 կարող են տեսնել պայմանները Վարչութեան
 Երեսարարական Բաժնում բոլոր լի օրերը ցե-
 րեկվայ 9—3 ժամերին: 3—3

Լ յ յ ա տ ե ս ա լ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
ՄԻԹԵՐԵԱՆ ՄԻԱՎՆՈՒԹԻՒՆ
 (200-ամեայ յօրեկանի առիթով)
 Գինն է 5 կօպ.
 Դիմել. Գուտտէնբէրգ զրաւմաճառանոց, Լօ-
 Րիս-Մէլիքեան փողոց, № 11: 2—5
ԻՄ ՄԱՆՈՒՑԱԿՏՈՒՐԱՅԻՆ ՄԱԳԱԶԻՆԻ
ՀԱՄԱՐ
ՀԱՐԿԱՒՈՐ Է ԳԱՆՁԱՊԱՀ
 հմուտ ուսաց լեզուին. ամսավճար 20 րուբլի,
 սենեակ եւ ճաշ:
 Դիմել՝ Ногайскъ (Таврич. губ.) Никитѣ
 Егоровичу Черчепову. 2—4

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
 այս արանով յայտարարում է, որ իր առեւանում
 սեղտեմբերի ամսի 10-ին, ցերեկվայ ժամի
 12-ին, նշանակված է աճուրդ կապալով աալու
 համար մօտ 135,00 պ. սաժ., հաս. 0,33x0,22
 պ. սաժ. բէտօնէ կոյուղու շինութիւնը Կիր-
 պիկայ Միլիթարնայա փողոցում գոյութիւն
 ունեցող կոյուղուց: Ալէքսանդրօվայա փո-
 ղոցով, մինչեւ Բաքրաձէլի տունը, 2450 րուբ-
 լով: Աճուրդին մասնակցել ցանկացողները կա-
 րող են տեսնել պայմանները Վարչութեան
 Երեսարարական Բաժնում բոլոր լի օրերը ցե-
 րեկվայ 9—3 ժամերին: 3—3

Հ Ա Ր Կ Ա Ւ Ո Ր Է
ՄԷԿ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՃՈՒՅԻ
 Չարվույում (Закасп. край) մի ընտանիքում
 երեխաների հետ պարագելու համար հայերէ-
 նից եւ աւսերէնից: Ցանկացողները պայման-
 ների մասին կարող են դիմել՝ Քիֆլիս, զրա-
 վանութ Վրուտանբերգ (Լօրիս-Մէլիքեան
 փողոց № 11) Գալստեանին: 3—6

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ
 տեսչի թոյլտուութեամբ, ուսուցչի ընտանիքում
 ընդունվում են
ԳԻՇԵՐՈՒԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
 Графская ул., домоъ Элизова, № 10.
 3—3

**Թիֆլիսի Առեւտրական Եւրօպայական Եւրօպայական
 Ընկերութեան Վարչութիւնը**
 արանով հրատարակում է պ. պ. բաժնեատերերին ընդհանուր ժողովի, որ պէտք է տեղի ու-
 նենայ այս սեղտեմբեր ամսի 23-ին, առաւօտեան 10 ժամին, վարչութեան բնակարանում,
 Երեսնանի հրապարակ, տուն Պարազեանի:
 Չարվույում չի կատարուի:
 1) Վարչութեան առաջարկութիւնը ձեռք բերելու նախապէս արդիւնաբերութիւն Բաղուս:
 Մանօթութիւն. Համաձայն ընկերակցական պայմանագրութեան 24-րորդ յօդուածի, հա-
 լատարակութիւնը պէտք է ներկայացնվին Վարչութեան երեք օր ժողովից առաջ:
 Մուտք տեսնելու ստանալու համար՝ խնդրում են ներկայացնել բաժնետիրական
 անդորրագրերը մի օր ժողովից առաջ:
 (7, 9, 22) 2—3

**Պրոքսիւռ ռենել յայտնելու յարգելի Հասարակութեան եւ վաճառա-
 կաններին,**
 որ այս տարի ստացել ենք մեծ քանակութեամբ
Ա Մ Ե Ր Ի Կ Ա Կ Ա Ն Ի Է Զ Ի Ն Է Կ Ա Լ Օ Շ Ն Ե Ր
 ամեն տեսակ, տղամարդկանց, կանանց եւ երեխաների: Ուստի խնդրում եմ յարգելի աւանդու-
 թիւն զիմեղ մեզ, ուր կը առնան նոր ապրանք: Մեծ քանակութեամբ գնողներին կը լինի բա-
 ւական զիջում: Նոյնպէս ստացել ենք ՊՐՕՎՈՒՆԻԿ կոշիկած ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակի: Պա-
 տուէրները կը կատարվին անմիջապէս, նայած պայմաններին: Մեզ մօտ ծախվում են նոյնպէս
 կօշիկները փափկա ցնոյլ իւղեր եւ փայլ տուող գունաւոր զլազուրները
 նոյնպէս ծախվում են արտասահմանի եւ Ռուսաստանի ամեն տեսակ կաշուեղէն ապրանքներ
 եւ կօշիկարական ամեն տեսակ զործերը:
 Մեր Հասցէն. Тифлисть, Армянский базарь, Братья Яргуловы.
 Բաժանմունքը. Баку, Губернская ул., Т. Яргуланць.
 (հ. 4.) 8—20

**ՀԱՇԻՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԵՍԸՆԹՈՒՅՔԻ VI ԸՐՋԱՆ
 Խ Ս Չ Ս Ո Ւ Ր Ծ Ի Ր Ը Զ Ե Ա Ն Ի**
 Ուսուցանում եւ պատրաստում է 4 ամսվայ ընկացում
 Պարագլուխ արտակներն են,—1) Կրկնախոյալական հաշուապահութիւն: 2) Առեւտր-
 կան թուրքարեւելիւն: 3) Թուրքարեւելիւն համրիչի վրա: 4) Բանկային հաշուապահութիւն
 ըստ ամենայն ճիւղերի: 5) Առեւտրական նամակագրութիւն:
 Պարագլուխները սկսվելու են 10-ին սեղտեմբերի, 1901 թ.ին: Կարելի է տեսնել ժամի
 4-ից մինչեւ 8-ը երեկոյեան: Հասցէն. անկիւն էրզարիս հրապարակի եւ Ակիւսօվի փողոցի,
 ա. իշխ. Երեկոյեանի № 14: (հ. շ.) 6—6

ТИПО-ЛИТОГРАФИЯ
„П У Ш К И Н С К А Я С К О Р О П Е Ч А Т Н Я“
„ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ“ ՏՊԱՐԱՆ
 (Նոր բացված հայկական տպարան)
 Ընդունում է ամեն տեսակ եւ ամեն լեզուներով պատուէրներ: Ունենք եւ մեծ քանա-
 կութեամբ հայերէն նոր ձեւի տառեր, որոնցով պատրուում են զանազան գրքեր եւ ի միջի
 այլոց բժ. Բուրուլեանի բրոշուրները: Տպագրութեան մաքրութեան վրա առանձին ուշադրու-
 թիւն է դարձնվում: Գինը չափաւոր եւ ժառանգելի: Պատուէրները ընդունվում են հետեւեալ
 հասցէով. С. Петербургъ, Лештуковъ, 4.
 5—5 Տպարանի կառավարիչ՝ Տ. Գեղաւորեան

ԳԱՆՁԱԿ ԲԱՂԱՔՈՒՄ
 Ուսուցիչարանական բարձրագոյն իշխանութեան թոյլտուութեամբ, ներկայ տարվայ օգոստոսի
 20-ից բացվում են
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԱԿԵՐԱԿԱՆ ՊԱՐՈՑՈՎ ԵՎ ՍԵՆՏԻՆՈՎ
 Հանրակրթական դպրոցում, ի միջի այլոց, աւանդվում են ֆրանսիական եւ գերմանական
 լեզուները:
 Օտարաբաղաւաքները զիմում են՝ Елисаветполь, учредителю коммерческихъ бур-
 совъ, Е. Н. Исаакову. (հ. հ. շ.) 8—10

ՄԱՆԱԻՈՐ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ
ՅԱԿ. ԹԱԴԵՈՍԵՄՆՅԻ ԲԱԳԻՈՒՄ
 (Չարվույի փողոց, ա. Ալիկի)
 Աշակերտների ընդունելութիւնը փոքր եւ մեծ պատրաստական եւ I դասարաններում
 կը սկսվի օգոստոսի 20-ից: Նախակրթարան մտնում են առանց քննութեան: Խնդրեցնել եւ
 ղօկուսմաններ ընդունվում են ամեն օր, 9—12 ժամը: Ուսումը սկսվում է սեղտեմբերի 3-ից:
 12—12

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Պ Ա Ր Տ Է Զ
Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն Ե Ի Պ Ա Ն Մ Ի Օ Ն
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
 (Բաքու, Полицейская улица)
 Պատրաստվում են երեխաները բոլոր միջնակարգ դպրոցների համար: Ընդունելութիւնը օգոս-
 տոսի 25-ից: 8—10

Ֆիլիստիների միևիտրի քոյուուութեանը
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
 (Բաքու, Пращенная, домоъ Теръ-Ованесова)
 Կուրսերի նպատակն է ասլ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթու-
 թիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են առաջա-
 տատններ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուրքարեւելիւն եւ թուր-
 քանութիւն համրիչի վրա: 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական,
 առեւտրական եւ բանկային: 3) Առեւտրական թղթակցութիւն: 4) Առեւտրական տնտե-
 սագրութիւն: 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ: 6) Գնդագրութիւն եւ ա-
 րագագրութիւն (ուղղումն ձեռագրի):
 Ընդունելութիւնը՝ սեղտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղը. Մոլիանեան
 եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում: Կուրսերի կանոնադրութիւնը (УСТАВЪ) եւ
 մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար: Օտարաբաղաւաքները
 զիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспа-
 рову. (հ. շ.) 20—25